

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Մեծարգոյ պ. Յարութիւն Պապովեանի Դպրոցական ֆոնդի օգտին փոխադրած տասն հազար (10,000) ռուբլու № 506292 փոխանակագիրը։ 31 մարտի, թ. 462։

Դիւանի գրութիւններով մանրամասն տեղեկութիւններ պահանջուեց Կարնոյ և Վասպուրականի թեմերի Հայոց առաջնորդներից քրդական վերջին շարժումների մասին։ 31 մարտի, թ. թ. 463, 464։

Դիւանի գրութեամբ թոյլ տրուեց Մայր Աթոռի միաբան Աբել արեղային մկրտել Բերլինաբնակ Հետուիգ և Յակոբ Երամիշեանների երեխաներին Հայոց եկեղեցու ծիսով նոցա գրաւոր խնդրի համաձայն։ 2 ապրիլի, թ. 479։

Կոնդակ օրհնութեան Տփխիսի Հայոց Հոգևոր Ներսիսեան դպրանոցի ուսուցիչ պ. Խսահակ Յարութիւնեանի անունով՝ նորա 30-ամեայ գրական գործունէութեան և 25-ամեայ մանկավարժութեան յոբելեանի կատարման առթիւ։ 13 ապրիլի, թ. 502։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Սամսոնի Մարզուանի Կոլէճի հայ ուսանողների և ուսանողուհիների յօգուտ Դպրոցական ֆոնդի ուղարկած ութսուն հինգ ռուբ. 50 կ. գումարը։ 15 ապրիլի, թ. 503։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Դերբենդցի պ. Յովսէփ Կիրակոսեանի փոխադրած յօգուտ Դպրոցական ֆոնդի երկու հարիւր յիսուն և մի ռուբ. 51 կ. (251 ռ. 51 կ.)։ 15 ապրիլի, թ. 507։

Կոնդակ պ. Արտաշէս Սարեանի անունով, որով կարգուեց նա Բաթումում Մայր Աթոռի գանձանակագրաթերթերի և այլ նուէրների գանձապետ. ուղարկուեց նաև մի հատ ժապաւինեալ մատեան նուէրներն արձանագրելու համար։ 21 ապրիլի, թ. 563։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յայտնուեց Կոմսուհի Ելիզաւետա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովային, ի հետևումն նորա գրութեան, որ Նորին Սրբութեան հրամանով ս. Էջմիածնի Սինոդն արդէն փոխադրել է վանքի կողմից երկու հարիւր ռուբլի՝ հարաւային Ռուսաստանում փոթորկից վնասուածների օգտին, և հեռագրերով պատուիրուեց բոլոր Հայոց թեմական առաջնորդներին, որպէս զի նոքա ևս դրամական նուէրներ ժողովել տան և ուղարկեն ըստ պատկանելեաց։ 22 ապրիլի, թ. 564։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Եւրոպայի Հայոց առաջնորդ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Իւթուճեանի անցած ապրիլի 9/22-ի, թ. 2627 գրութեամբ ուղարկած յօգուտ Դպրոցական ֆոնդի մի հազար երկու հարիւր երեսուն և չորս ռուբ. 55 կ. (1234 ռ. 55 կ.) փոխանակագիրը։ 24 ապրիլի, թ. 579։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Նոր-Նախիջևանից երդուեալ հաւատարմատար պ. Գրիգոր Պաչերեսեան Զալխուշեանի ուղարկած յօգուտ Դպրոցական ֆոնդի մի հազար ութ հարիւր յիսուն ռուբլի (1850 ռ.)։ 24 ապրիլի, թ. 580։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի Տպարանի վարչութեան Ջաւայի Սուրեթայա քաղաքի Զորապ-Մեսրոպ Ընկ. ուղարկած մի ոսկու № 30/314 փոխանակագիրը և պատուիրուեց ստացման անդորրագիրն ուղարկել Ընկերութեան։ 24 ապրիլի, թ. 587։

Դիւանի գրութեամբ տեղեկութիւն տրուեց Եւրոպայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Իւթուճեանին Նորին Սրբութեան անունով ուղարկած յօդուտ Դպրոցական ֆոնդի մի հազար երկու հարիւր երեսուն և չորս ռուբ. 55 կ. (1234 ռ. 55 կ.) փոխանակագրի ստացման և ս. Էջմիածնի Սինոդին յանձնելումասին։ 24 ապրիլի, թ. 599։

Կոնդակ զոհունակութեան և օրհնութեան Գանձակեցի ալ. Ղևոնդ Յովհաննիսեանի անունով՝ Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցուն նուիրաբերած 500 սաժ. հողի առթիւ։ 24 ապրիլի, թ. 600։

Կոնդակներ Վրաստանի, Շամախու և Աստրախանի Հայոց թեմական առաջնորդների անունով, որոնցով պատուիրուեց, որ աջակցութիւն ցոյց տան Երևանի փոխթեմական Տ. Խորէն եպիսկոպոսին, երբ վերջինս Երևանի թեմական Դպրանոցի 75-ամեայ յոբելեանի հանգանակութեան գործով գնալու լինի Տփխիս, Բագու և Հիւսիսային Կովկասի հայաբնակ քաղաքները։ 24 ապրիլի, թ. թ. 603, 604 և 605։

Նորին Սրբութեան գրութեամբ յայտնուեց Կոյրերի Հոգաբարձութեան Նախագահ Կոմսուհի Ելիզաւետա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովային, որ շրջաբերական գրութիւններով յանձնարարուեց բոլոր Հայոց թեմական առաջնորդներին, որ մայիսի 10-ից մինչև 19-ը գանձանակ շրջեցնեն կոյրերի օգտին և գոյացած դրամն ուղարկեն Հոգաբարձութեան Խորհրդին։ 28 ապրիլի, թ. 615։

Դիւանի շրջաբերական գրութիւններով ուղարկելով Կուրաց Հոգաբարձութեան Նախագահ Կոմսուհի Ելիզաւետա Անդրէևնա Վորոնցով-Դաշկովայի գրութեան վաւերական

պատճէնները՝ առաջադրուեց կարգադրել բոլոր Հայոց եկեղեցիներում մայիսի 10-ից մինչև 19-ը գանձանակ շրջեցնել կոյրերի օգտին և գոյացած դրամն ուղարկել կուրաց Հոգաբարձութեան։ 28 ապրիլի, թ. թ. 617—622։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին կարգադրել, որ Ղարաբաղի կոնսիստորիայի փաստաբան Բաբաքեխանը անձամբ գնայ Ամարասի վանքը, եթէ անհրաժեշտ է, նաև Ճուշի, որպէս զի վերցնի բոլոր փաստաթղթերը, ծանօթանայ առտեղեան կալուածների ներկայ վիճակի հետ և սկսի անհրաժեշտ դատերը՝ Ամարասի կալուածները պաշտպանելու համար։ 30 ապրիլի, թ. 638։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել Ղարսի փոխանորդ Տ. Երեմիա վարդապետի միջոցով Ղարսի բանտի գրադարանին կրօնական բովանդակութեամբ ընթերցանութեան գրքեր։ 30 ապրիլի, թ. 640։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Տփխիսի Կուսանաց վանքի սարկաւագուհի կոյս Հռիփսիմէ Ղանեանցի անունով, որին՝ թեմի առաջնորդի և մայրապետի միջնորդութեան համաձայն, արծաթեայ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 5 ապրիլի, թ. 488։

Կոնդակ նոյն Կուսանաց վանքի սարկաւագուհի կոյս Կատարինէ Գուլուլեանցի անունով, որին նոյնպիսի արծաթեայ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 5 ապրիլի, թ. 489։

Կոնդակ նոյն Կուսանաց վանքի սարկաւագուհի կոյս Գայիանէ Ալիխանեանի անունով, որով նոյնպիսի արծաթեայ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 5 ապրիլի, թ. 490։